մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն: Ի տարբերության հայտի ապահովման՝ պայմանագրի ապահովումն ապահովում է պայմանագրի կատարման գործընթացը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարևանն արձանագրում է, որ ի տարբերություն հայտի ապահովման, որը չի ներկայացվում, երբ գնման ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, պայմանագրի ապահովումը պետք է ներկայացվի միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Սույն գործի փաստերի համաձայն՝ կողմերի միջև կնքվել է պայմանագիր և պայմանագրի կնքմամբ եզրափակվել է հայտի ապահովման գործառույթը: Միաժամանակ Դատարանը հարկ է համարում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշվում է մասնակիցն ընդգրկվում է [գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների] ցուցակում, եթե խախտել է (...) և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը: Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե գնման ընթացակարգը որ փուլում է գտնվում, մասնակիցը պարտավոր է վճարել կամ հայտի ապահովում (եթե թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում), կամ պայմանագրի և(կամ) որակավորման ապահովում (եթե պայմանագրի կնքումից հետո թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում): Հայցվորի մատնանշած այն հանգամանքը, որ հայտի ապահովում ներկայացնելու պարտականություն չի ունեցել, ինչպես նաև կայակոչված ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած որոշումները, վերաբերում են այն դեպքերին, երբ մասնակիցը թույլ է տալիս գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում (դեռևս պայմանագիր կնքված չի լինում): Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ մասնակիցը թույլ է տալիս պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտում, անկախ այն հանգամանքից, որ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, (Կարգի 32-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ապահովման ներկայացումը պարտադիր է), ապա Մասնակիցը պարտականություն ունի վճարելու պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական վերլուծությունները, համադրելով դրանք սույն գործում առկա փաստերի հետ (ընդ որում, հայցվորը իր ներկայացրած հայցադիմումում չի վկայակոչել այն փաստը, որ պայմանագրի ապահովման գումարը տրվել է) Դատարանը գտնում է, որ մասնակիցը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Վերոնշյալ պատճառաբանություններով Դատարանը գտնում է, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 30.05.2024 թվականի թիվ 05/249 «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը իրավաչափ է և հայցը ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի հիմքով անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին և հաշվի առնելով, որ հայցվորները նախապես վճարել են պետական տուրքի գումարը, այլ դատական ծախսեր չկան սույն գործով, իսկ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 30.05.2024 թվականի թիվ 05/249 «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր

ճանաչելու պահանջի մասին, մերժել։

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված։

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում։

Դատավոր՝ **Կիմա Արզումանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am